




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել սովա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՌ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ս Ա Ս Մ Ա Յ Մ Յ Ե Ր

ՎԻՊԵՐԳ

ԱՒԵՆՆԱ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՑՊԱՐԱՆ

1922

891.99

Ի - 75

891.99

h-75

10 SEP 2010

19 NOV 2011

ԱՌ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ս Ա Ս Մ Ա Յ Մ Յ Ե Ր

ՎԻՊԵՐԳ



ՎԻԵՆՆԱ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ



29 APR 2013

33023

Իմ սիրելի Սիմոն Յակոբեանին

Սրտագին ներք:



3594-2010

ՍԱՍՄԱՅ ՄՀԵՐ

I.

Մեռաւ Դաւիթ, Սասմայ առիւծ,
Մեռաւ Խանդութ սրտի կըսկծուց.
Ու մնաց որբ, անհէր, անմէր,
Իրենց որդին՝ Մանուկ-Մհեր:
Դաւթի եղբայր՝ Ճընճղափորիկ,
Եկաւ տիրացաւ Սասման անառիկ,
Տէր դարձաւ Դաւթի գանձին ու կայքին,
Որ պահէ շահէ Սասմայ ժառանգին:
Թէեւ Մհեր դեռ
Տղայ էր, տխմար,
Իրեն ուժի տէր
Աշխարհ մարդ չկար.
Հօր պէս վէժ-հսկայ,
Աչքերը քոց-հուր,

Մէջք ու քազուկներ
Պողպատիկ ու կոռ:
Սասմայ սեպ-սարեր ոտներն անդունդին,
Գլուխն երկնքին, երկնուց ամպերին, —
Կը վազէր Մհեր
Ամպի ետեւէն,
Փետուր կը պոկէր
Արծուի թեւէն:
Ծօթը մարդու կեր
Կ'ուտէր մէկ ժումով,
Ով տարով կ'աճէր,
Էն կ'աճէր ժամով:

— Էս վիշապ տղան էսքան անկշտում՝
Բան չի թողնելու մառանն ու տաշտում:
Իրար կ'ասէին
Ծննդափորիկ ու իրեն կնիկ:

Խեղ էր քնութիւն՝ քորք ու քարկացկոտ,
Օրերով խոժոռ, յօնքերը ժանգոտ,

Օրերով մէնակ, ինքն իր հետ Մհեր՝
Մարդու չէր նայեր,
Մարդու չէր խօսար,
Մթնաբ ու մլար՝
Հանցոր Նեմրութ սար:

— Էս դեւէն պիտի փորձանք գայ մեզի.
Իրար կ'ասէին էրիկ ու կնիկ. —
Խօսք չի հասկանայ, ո՛չ սաստ, ո՛չ խրատ:
Ու միտք կ'անէին
Էրիկ ու կնիկ,
Թէ ինչպէս անեն՝
Մի քանի աքով,
Մի ուրիշ ճամբով
Հեռացնեն Մհեր
Տընէն ու տեղէն,
Անճարակ հանեն ու խելքէ տուկատ,
Վար ձգեն Մհեր Սասունցոց աչքէն.
Ու իրենց որդին՝ Փոքրիկ-Ծննդիկ,
Որ գիր կը սորվէր Մարութայ սուրբ վանք,

Դարձնեն ժառանգ
 Զոջենց աթոռքին,
 Իշխան տիրական
 Սասմայ աշխարքին:
 Ելան կարգեցին
 Մհերին հօտաղ,
 Մէջքին կապեցին
 Գոմշի մէկ մախաղ՝
 Հացով ու թացով:
 Ասին երկուսով. —
 — Բան արա՛, որդի,
 Պարապ մի նստի:
 Մհերն էր. կ'ենէր առաւօտ լուսին,
 Առջեւը կ'ածէր հորթերն ու մոզին.
 Ու կ'երթար Սասմայ կանանչ սար ու ձոր:
 Ողջ հացը կ'ուտէր մի քրդու՞ արած՝
 Ու օրը քրտը՝
 Կը մնար քաղցած:
 Մէկ օր էլ եղաւ,
 Որսկանի մէկէն ուզեց մի քիչ հաց,

Որսկանը նրան խրատեց, ասաց.
 — Տօ՛, տխմար Մհեր, տունդ չքանդի,
 Դու լինիս ժառանգ Սասմայ տէր Դաւթի,
 Ու հիմի հսպէս՝ աղքատ հորթարած.
 Զու հօր քոին էր աշխարհ արարած.
 Զու հէրը ունէր տկերով ոսկի.
 Գեղեր ու քաղաք, հուր-հրեղէն ձի,
 Որ ամպերէն վեր կը թռնէր կ'երթար.
 Ու թուր-կայծակին, որ ժէռ կը կտրէր.
 Հօրեղբայրդ ուտէ քու հօրդ գա՛նձը,
 Դու հիմի քաղցած մաշես քու ա՛նձը.
 Վսյ ծո՛ւռ Սասունցի, տունդ չքանդի:

Ու Մհերի աչք քաց եղաւ մէկէն,
 Իրիկուն չեղաւ,
 Լցւած տուն դարձաւ:
 — Հօրեղբայր, օրըս կ'անցնեմ անօթի:
 Հօրեղբայրն ասաց.
 — Ի՞նչու, ա՛յ որդի,

Սասմայ մեր սարեր լիքն են ժախ, քանջար,
Քաղէ, կեր, ինչո՞ւ կը մնաս անճար:

Աւելցուց Մհեր.

— Սասմայ ժէ՛ռ քարեր՝ շեղքերու նման՝
Տրեխներն հագիս՝ մաշեցին, կերան.

— Կարկտի, հագի. — նեղսրտած ասաց Ճնճղափորիկ:
Մհերն էր. գոռաց.

— Իմ հորըս ծովէն մէկ ափ ջուր չե՞ս տայ:
Ու կիտեց յօնքերն իրարու վրայ:

— Անիծւի էն մարդ, որ մեծսիրտ որքին
Թեւի տակ կ'առնի ի վեր աշխարհին:

Հօրեղբայրն ասաց ու մահակն առաւ,
Ժեծեց Մհերին, տնէն դուրս արաւ:

Հախտն առաւ Մհեր, որ զարկէր նրան,
Չեող չը գնաց հօրեղբոր վրան:

Ու ելաւ Մհեր լալով, լաց-աչքով.

Գնաց հօրումօր գերեզմանի քով,

Թողութիւն ինչորեց հօրէն ու մօրէն,

Հեռացաւ Սասմայ հողէն ու ջրէն:

II.

Մհեր զուրկ ու մերկ,

Անօթի ծարաւ,

Հախտը ձեռքն առաւ,

Ճամքան ոտքն առաւ:

Շատ գնաց թէ քիչ,

Հասաւ Օղ-Տողան

Թագաւորի հող:

Տեսաւ՝ ամռան

Շոգ-կրակին,

Թիկն է տւել,

Ժառի շուքին

Հարուստ մարդու մին

Կնկայ հետ մէկտեղ,

Կը խմէ գինին,

Կ'ուտէ ձուածեղ:

Մհեր ասաց.

— Բարով քեզի,
 Բարին քեզի,
 Անօթի եմ,
 Հաց տուր ուտեմ:
 Հարուստն ասաց.
 = Արտըս գնա՛,
 Բարհան արա,
 Բրտինք թափէ՛
 Հաց կու տամ՝ կէ:
 Մհեր գնաց մշակներու քով.
 Տեսաւ՝ նրանք եղունգներով
 Սուր-սուր քարեր հողէն կ'հանեն,
 Արտ կ'իստակեն քարէն, կոշտէն:
 Ինքն էլ նրանց պէս՝
 Չեղք զարկեց գործին,
 Արեւու քոցին,
 Ժնկածալիկ,
 Մէջքակոտոր
 Ու քրտնաթոր,
 Դատեց քանաւ մինչեւ իրկուն.

Եղաւ իրկուն,
 Մէկ աշտու՞մ հաց տւին՝ ուտի,
 Մէկ չոր խշտի՝ պառկի, քնի:
 Մհեր պառկեց, քուն չտարաւ,
 Աչք չփակեց ու ողջ-գիշեր
 Աշխարհքի քան միտք կ'անէր միտք
 Սասմայ Մհեր.
 — Ռամիկ չարադատ
 Չհր կուտէ,
 Հարուստ պարապ-մարդ
 Մեղր կուտէ...

Առտուն կանուխ մշակներ ելան,
 Անխօս անձէն կանգնան քանի:
 Ու համբերեց մէկ-երկու օր,
 Վրայ երեքին
 Խօսեց Մհեր
 Մէջ իր մտքին.
 — Է՛ս էլ կեանք չէ,
 Է՛ս չար մահ է:

Գլուխն առաւ,
Ելաւ գնաց ուրիշ աշխարհ:

—

Հախտը ծեռքն առաւ,
Ճամբան ոտքն առաւ,
Գնաց ու հասաւ
Ոստանայ քաղաք:
Ու մի փոնապան
Մհերին առաւ
Իրեն ծեռքի տակ:
Քառսուն մարդու ըան
Մէն մէնակ կ'անէր
Սասմայ տէր Մհեր —
Ողջ օրը ըտլոր ջուր, փայտ կը կրէր,
Ու գիշերն անքուն ալուր կը մաղէր.
Խմոր կը շաղէր, խմոր կը հունձէր:
Գլուխը քարծին՝ աչքը չկալած՝
Կը կանգնէր ոտաց,
Փուռը կը վառէր,
Գնդեր կը շինէր:

Իր ըածին հացը
Քիչ կու գար իրեն.
Ձեռքն ընկած տեղէն
Հաց կ'առնէր կ'ուտէր:
Հացթուխը տեսաւ,
Բարկացաւ, ասաւ. —
— Տօ ծակաչք, ծակփոր,
Սասունցի վիշապ.
Ի՞նչ մնաց՝ ծախեմ՝,
Կերար ողջ ըտլոր:
Մհեր աչքերը խորրեց վրան,
Վախէն ձէնուծուն կտրեց փոնապան:
Ու հացերն առաւ,
Փակի տակ դրաւ:
Մհեր մէկ մատով փականք կը կոտրէր,
Հացերը կ'ուտէր:
Փոնապան ելաւ դատաւորի մօտ
Գնաց զանգատի. —
Թէ Մհեր գող է, կողպէնք կը ջարդէ,
— Հացերը կ'ուտէ:

3594-2010



Դատաւոր կանչեց Մհեր իրեն քով
Ասաց հարցմունքով.

— Մհեր, դուն ինչու

Փականք կը քանաս,

Հացեր կը գողնաս:

— Ի՞նչ գողնալ, ի՞նչ քան,

Ես չեմ հասկանայ.

Օր ու գիշեր դատում ունեմ,

Ու կ'անօթնամ, պիտի ուտեմ:

Քառսուն մարդու քան կը տեսնեմ,

Ծնծղաքածին կու տայ ինձի:

Էն չի գողնայ, ես կը գողնամ:

Ու դատաւոր սաստեց, ասաց.

— Օրէնք կայ, Մհեր.

Քու հացաքածին

Պէտք է որ ուտես.

Ուրիշի հացին

Իրաւունք չունես.

Էս հեղ թող էսպէս.

Է՛լ չանես, Մհեր,

Պատիժ կայ, գիտես...

Պողպատ ուտերը վեր քաշեց Մհեր,
Ասաց զարմացած.

— Էդ պատիժ, օրէնք,

Ես չեմ հասկանայ.

Ի՞նչ կ'ուզէք, ասէք,

Ես դատում կ'անեմ,

Իրաւունք ունիմ

Անօթցած ատեն

Հափովս ուտեմ.

Ձէք ուզէ, ախրէր,

Հեռանամ, կ'երթամ:

Բա՛. էս օրէնք է,

Դժար քաները

Ես եմ անողը,

Համով քաները

Ինքն է ուտողը,

Թէ զանձ կապողը:

Դատաւորն ասաց.

— Ծնունդն, խննթ ու խեռ,

Սասմայ Տան ձեռներ.
Զօրի քան չըկայ,
Խօսք չեն հասկանայ:
— Աստծու քարին
Ձեր տուն ու տեղին:
Մհերն էս ասաց
Ու ելաւ գնաց
Մէկ ուրիշ քանի,
Գլուխ պահպանի:
Ժուռ եկաւ քաղքի
Գռն ու փողան
Հազար մանէ ման,
Կանգ առաւ կեցաւ
Մէջ պողոտային,
Առջեւ մէկ խոշոր
Փառանց փառ շէնքին:

Բանձրիկ պատերէն
Վարպետներ կը ձէնեն.
— Էյ, կիր քերէք

Խիպար ու քար.
Բանւորներ ուամիկ՝
Շալակնին առած
Քարեր ահառիկ.
Ու ոլորման սանդուխներով
ծնկներով դեդեւ,
Սրտով հեռահեւ
Կ'եղնեն ու կ'իջնեն:
— Էս ինչ կը շինէք,
Հարցրեց Մհեր:
— Դարպաս կը շինենք,
Մէկ հարուստ մարդու.
Թէ գործ չունիս դու,
Մեր հետ քանի,
Իրկուն կըլնի,
Տանտէր կու գայ,
Արծաթ կու տայ,
Ապրուստ կ'անես:
Ու Մհերն էր, քանուր եղաւ,
Քարերն առաւ

Անութի տակ .
Թեթեւ, թեթեւ
Կ'ելնէր վերեւ,
Կ'իջնէր յատակ:

Եղաւ իրիկուն,
Իր արծաթն առաւ .
Հետ քանւորներուն
Մտաւ տաղաւար .
Իրար վրայ եղան ծւար
Դառ ու դադրած:

Ու օրանց մէկ օր՝
Մէկ տղայ քանւոր,
Քարը շալակին՝
Բանձրաքաշ տեղէն
Վար ընկաւ գետին,
Ու եղաւ ցրեխ
Գլուխն ու ըղեղ:

Մհեր էս տեսաւ,
“Ախ, քաշեց, ասաւ .
Ռամիկ անտուն մարդ
Դարպաս կը շինէ .
Ու իրեն համար
Անտապան հողվար . . .

Ու ելաւ գնաց
Ոստանայ քաղքէն:

—

Լախտը ձեռքն առաւ,
Ծամբան ոտքն առաւ,
Գնաց Մհեր,
Մտաւ մի գեղ .
Ու տանուտէր
Առաւ Մհեր
Մի փոր հացի
Ղրկեց կոռի,

Ղրկեց կոռի
Թազաւորի:

—
Օրն է հասել.
Գեղջուկ, ուամիկ
Արտն են հընձել,
Հունձը փընջել՝
Բերել կալսել:
Ու կալի մէջ
Դիգել շեղջ-շեղջ
Ոսկի ցորեն:

Եկաւ հեռէն
Մի ծեր գուսան՝
Ձեռքին քնար —
Գանկ մի եզան,
Եղջիւրներէն
Եօթնադի լար
Բաշած մի վար:

Ջարկեց դաշըն պիրկ լարերին,
Գովքը երգեց արդար հացին:

— “Փա՛ռք տւէք հացին,
Հապա Աստըծուն,
Հացն է աշխարքիս
Ի՛սկն ազատութիւն.
Հազար անգ հազար
Գովքն արէք հացին,
Հացն է աշխարքիս իսկն ազատութիւն:”

Ու ծեր գուսան
Իր քաժն առաւ
Կուց մի ցորեն,
Օրհնանք տալով
Գնաց նորէն:

Շարան-շարան
Երկնուց իջան
Հաւք ու թռչուն

ծըւըլացին
Շուրջը կալին
Ու քաժերնին
Առան-թռան ...
Եկաւ պարոն իր արտատէր
Կիսեց տարաւ ցորենի շեղջ.
Իրար յետնուց եկան հասան
Թէ գեղապետ,
Ու վարդապետ,
Տէրտէր, ժամհար
Պարտքի դիմաց
Ժամի համար,
Հարկի դիմաց,
Սրբի համար, —
Առան տարան
Իր աչքի լոյս՝
Ոսկի-ցորեն:
Բան չըմտաց խեղճ ուամիկին
Լոկ ծեղ ու կուտ կալատակին:

Էս որ տեսաւ
Կրակ վառեց Մհերի ծոց,
Օր ու գիշեր
«Ա՛խ» կը քաշէր.
Աշխարքի քան միտք կանէր միտք.
Աշխարքի քան հանց որ թոյն օձ
Կը խէթըթէր սիրտն ու հոգին:

— «Ռամիկ, գեղջուկ
Ամբար-մառան
Կը լեցնէք դուք
Իշխաններուն ու պարոնին
Ու կը մսաք նորէն-նորէն
Մերկ ի մօրէն ...»

Օրէն մէկ օր,
Գեղի էն ոէս կանչեց նրան,
Ասաց. — Մհեր, հարկ տո՛ւր հիմի,
Գլխահարկ տո՛ւր թագաւորի:
Մհեր ասաց.

= Ի՞նչ հարկ, ի՞նչ կոռ,
 Ի՞նչ թագաւոր.
 Ի՞նչ է տւել՝ կ'ուզէ հիմի,
 Թէ կարող է, թող գայ՝ տանի:
 Էսպէս ասաւ,
 Ու բերդի պէս կանգնեց կեցաւ:
 Ռէսը ձէնեց, ձէնին եկան
 Գեղ-գեղովի, գեղջուկ, ուամիկ:
 — Կապէք, ասաց, կապէք ձեռ ոտ,
 Երկաթ զարկէք, տարէք ձգէք
 Մութ բռնատուն:
 Մհեր յօնքեր ժողվեց իրար,
 Լախտը քաշեց,
 Քաշեց զարկեց
 Տանուտէրին,
 Փռեց գետին
 Եօթն օրւայ մեռելի պէս:
 Գեղ-գեղովի ձեռք զարկեցին
 Մհեր բռնեն,
 Մհեր նորէն լախտը փարտեց,

Ժայրը լախտին դիպաւ պատին,
 Ժէռուտ քարէն մի փերթ փրթաւ,
 Փրթաւ զնայ,
 Կերթայ, կերթայ հուր-յաւիտեան:
 Լախտը փարտեց, ջարդեց, թափեց,
 Ինչոր ընկաւ լախտի ընքան.
 Մնացածներ զումար փախան,
 Յրիւ եկան,
 Խոհւ եղան:

Ինքը թռաւ,
 Գնաց ելաւ
 Սասմայ սարեր
 Բանձր ու ահիկ,
 Սասմայ սարեր.
 Էն անառիկ
 Սէգ-ծովասար,
 Որ ամպերուն է հաւասար:

III.

Կ'ելնէր Մհեր

Քերձերն ի վեր.

Արծիւներու վէս քներէն

Կը հաւաքէր ձուերն ամէն:

Ժէ՛ռ քարերը իրար կուտար,

Բոց կը հանէր ժէ՛ռ-քարերէն.

Կրակ կ'անէր, կը խորովէր

Ձուերն արծւենի.

Կուտէր Մհեր ու կուժովնար:

Խոր ծերպերէն ապառաժի

Կ'առնէր վայրի մեղուններու

Խորիսին ոսկի,

Ս եղըր կուտէր ու կուժովնար:

Օրւայ մէկ օր, մէջ կապանին

Սէկ վազր ահոիկ ու ահագին՝

Գրոհ տուաւ դէմ՝ Մհերին

Ու մոնչաց խօշ զարհուրիկ.

Մհեր լախտը քաշեց զարկեց՝

Ծեղքեց գանկը վազրի ահոիկ,

Միսը կերաւ, մորթը ձգեց

Կուռ թիկունքին,

Գլխու վրան՝

Գիշտ ու խալամ:

—

Սարի կանանչ

Մարմանդներով,

Ձորի մարմանջ

Առակներով

Վայրի հաւքեր

Ուրախ-զւարթ

Կը թռնէին, ծափ կուտային,

Տաղ կ'ասէին, խաղ կանւին.

Վայրի հաւքեր

Ուրախ-զւարթ:

Մհեր դարձաւ նրանց ասաւ.

— Երնէկ ձեզի,

Վայրի հաւքեր,

Դուք օրհնած էք,

Մարդն՝ անիծած.

Իրար հաւսար, հաւսարական,

Ազատ, անպարտ, ու աղքօր պէս,

Կուտէք, կ'ապրիք ու սէր կ'անէք.

Ո՛չ տանուտէր

Կը ծանչնաք,

Ո՛չ արտատէր,

Ո՛չ հարկ ու կոռ,

Ո՛չ թագաւոր.

Երնէկ ձեզի,

Դո՛ւք թեւաւոր

Ինքնիշխաններ:

Հաւքերն անուշ դայլայլեցին

Ու Մհերին

Հէնց իմանաս

Մարդու լեզուվ խօսք ասացին...

— Աստուած կեանք տայ

Ռամիկ մարդուն.

Էն կը ցանէ,

Էն կը հնծէ.

Էն կը պահէ արար-աշխարհ:

Ջեղ փոթորանք ծովու վրայ,

Որ հազարան վագրերու պէս

Կը մըրմհայ,

Ու կը քանդէ պատ ու պատնէշ. —

Մհեր էսպէս, ընց ու բորբոք,

Սիրտն ու հոգին ծով մըրբորկած,

Ու աշխարհին դարձաւ ասաց. —

— Ռամիկ դատի՛

Աշխարհ ուտէ,

Ծորէն մսայ

Ինքն անօթի...

Ռամիկ գեղջուկ,

Ձեր խեղճ խելքի

Կորածն էք դուք.
 Թէ որ տէր դառնաք
 Ձեր իրաւունքին —
 Ձեր աշխատանքին,
 Մէկէն կը չըքին
 Հարուստ ու իշխան
 Աշխարհիս վրան:
 Երթամ շինեմ
 Բերդ ու պատուար
 Նեղ ու դժար
 Օրւայ համար.
 Իջնեմ մեր տուն՝
 Առնեմ իմ հօր
 Զէնքեր քոլոր —
 Թուր-կայծակին,
 Հրեղէն Ձին. —
 Ելնեմ աշխարք ողջ աւերեմ,
 Ռամկութիւն բերեմ,
 Ռամկի իրաւունք:

Մհեր քարկ ու կրակ կտրած
 Առաջ-առաջ
 Ելաւ եկաւ Զգիրու հող
 Իջաւ հասաւ Զգիրու դաշտ.
 Զգիրու դաշտ մի մեծ գետ կայ.
 Խոր ու քոր.
 Ու անունն է Զգիրու Շատ.
 Հարուր քառսուն գետ ու գետակ
 Կը խառնուին իրարու հետ,
 Ու կը հիւսեն Զգիրու գետ:

Տեսաւ Մհեր ջուրն է ելել
 Վարար-վարար.
 Ու կ'աւերէ գեղ ու հանդեր,
 Արօտ ու վար
 Շինականին ու ռամիկին:
 Մհեր խղճաց, մըմնու սրտով,
 Ելաւ գնաց
 Մէկ ահագին քերձ ապառաժ
 Ժէռ կողերէն սարի պոկեց,

Դղմոր-դղմոր,
 Գլմոր, գլմոր,
 Բերաւ ձգեց էն գետի մէջ,
 Դետը քաժնեց երկու ծուղի.
 Մէկն աջ գնաց, ու մէկը՝ ձախ:
 Զուրերն իջան.
 Արեւերես
 Ելան գեղերն ու անդաստան:
 Բաղաք քաղքով էս որ տեսան
 Զարմացք-ահէն ջուր կտրեցան,
 Փախան մտան շէն ու հարուստ
 Զգիրու քաղաք.
 Պըղնձի Դուրք քառսուն նիգով
 Իրանց յետնէն պինդ գոցեցին:
 Մհեր հասաւ լախտը ձեռին,
 Ու եօթըն հեղ որոտմունքով
 Կոփեց քաղքի Դուրք Պըղնձին.
 Դոփեց գետին պողպատ ոտքով,
 Սասանեցաւ քաղաքն հիմէն,
 Զարհուրեցան մարդիկ ամէն,

Ձէնը ձգեց Սասմայ Մհեր,
 Դողաց, ճօճաց ծխնու վրէն
 Դուրք Պըղնձի:
 — Է՛յ Զգիրցիք, կուտաք ինձի
 Ձեր արծաթով, հացով ջրով
 Հազար վարպետ, որ վէմ տաշէ,
 Հազար վարպետ, որ պատ քաշէ,
 Երեք հազար քանուոր մշակ,
 Որ քար կրէ,
 Երկաթ կըռէ
 Երեք հազար քանուոր մշակ,
 Որ հող թալէ,
 Արծիճ հալէ:

Կուտաք, թէ չէ՝ քաղաքն ամէն
 Աւեր կանեմ,
 Հող ու աղուր,
 Մոխիր կանեմ.
 Բամհն կուտամ:
 Ու Մհերի ոտքը եկան

Քաղքի մարդիկ աղ ու հացով.

Խնդիրք-լացով.

Բերին տըւին

Քարւաններով հաց ու ոսկին,

Հազար վարպետ, որ վէմ տաշէ,

Հազար վարպետ, որ պատ քաշէ.

Երեք հազար քանւոր մշակ,

Որ քար կըրէ.

Երկաթ կըրէ.

Երեք հազար քանւոր մշակ,

Որ հող թալէ,

Արժիժ հալէ:

—

Վարպետ-քանւոր Մհեր առաւ,

Առաջն ածած գումար տարաւ

Սասմայ աշխարհ:

Ելան մէկ տեղ

Էն ամէնէն

Խօլ ու անդ

Քերձի վրէն.

Ու շինեցին

Բերդ ու պատար,

Կայծակ-քարով

Ու որձ քարով.

Արժիժ լըցրին կըրի տեղակ

Մէջն հիմերուն ու որմերուն:

Կանգնեցուցին գոռ աշտարակ

Քերձի վրէն վէս ու անել,

Ուր լոկ արծւի թեւն է դիպել.

Երկաթ աղխով ու նիզերով

Դուրք ու դարպաս:

Բուրժեր շինեց քանձր ու ըտոր,

Պատուհաններ՝ աչքով խուր

Կը նայէին ծամքաներուն

Ոլոր-միւր,

Թէ մօտաւոր, թէ հեռաւոր:

Անունը դրաւ Մհերի-Տապան.

Անունն հերիք էր վրան պահապան:

Զգիրուց քերած արծաթն ու ոսկին
Բաժարեց տուաւ վարպետ-քանութին.
Ու ծամբու դրաւ իրենց տներնին:
Ինքն էլ զո՛ւ զնաց՝ հօր զէնքերն առնի,
Ողջ աշխարքի դէմ՝
Գուպարի մոռնի:

IV.

Մհեր քարկ ու կրակ կտրած
Իջաւ Սասմայ Աթոռ-Քաղար.
Արեւ նոր էր աչքը քացել,
Ողջ երկինքն էր ծով-ծիրանի.
Մուխը կ'ելնէր պալան-պալան
Թոնիրներու, բուխարիկի.
Ու օրն էսօր սուրբ Կիրակի.
Ժամս էր կանգնած առաւօտուն:
Մհեր մտաւ Զոջենց իր տուն.
Եօթը կողպէնք պահարանէն
Հանեց Դաւթի
Արծաթ սաղաւարտ.
Պողպատ շապիկ,
Ոսկի քամար եօթը պատիկ,
Վահան լանջքին,
Թուր-Կայծակին,

Թուր-Հաւրունին.
 Հագաւ Մհեր
 Իր առիւծ հօր
 Պողպատ շապիկ,
 Ոսկի քամար եօթը պատիկ,
 Վահան լանջքին,
 Արծաթ սաղաւարտ
 Դրեց գլխին,
 Մէջքին կապեց
 Թուր-Կայծակին,
 Թուր-Հաւրունին:
 Ելաւ ոտքով զարկեց գոմի
 Բառսուն նիգով աղիւս՝ դռան.
 Դուռն երկաթի ընկաւ ծինէհան:
 Հանեց Դաւթի Ձին հրեղէն,
 Ձեռքը դրեց մէջքին՝ հեծնի,
 Ժամէն հասաւ Ճնճղափորիկ.
 Եկաւ թնդաց նորա վրայ.
 Ու արմուկէն քաշեց նրա:
 — Զքիս, Մհեր,

Զար, անառակ.
 Գետին անցնիս,
 Նաշդ տեսնիմ...

Մհեր արմուկով հըրեց նորան.
 Արմուկն առաւ ակռաներուն,
 Ակռաներն եղան հօրեղջօր
 Աղուր-փշուր,
 Հագար կտոր...

Թուա նստաւ Հրեղէն-Ձին,
 Եկաւ կանգնեց քաղքի միջին,
 Թուր-Կայծակին
 Աջու ձեռքին.
 Հանցոր սեւ ամպ Անդոկ սարէն
 Կայծակ կուտայ ու կը ծաթի. —
 Գոռաց Մհեր Սասմայ վրէն:
 — Է՛յ, դո՛ւք Սասմայ ամեն կտրիճ,
 Ժողո՛ւ ու ծե՛տ,
 Թող ուզողնիդ ասպազինուի,
 Դայ ինձ հետ. —

Աշխարք աւերեմ՝,
Ռամկութիւնն քերեմ՝,
Ռամկի իրաւունք,
Որ ինք տէր դառնայ
Իր արդար հացին:

—
Ու յետ եկաւ,
Մհերի ձէն,
Սալնոյ Չորէն
Մըշու Դուրէն,
Խուծայ սարէն
Ճապաղ-Ջուրէն
Գողգոթայէն,
Փըռեց նորէն
Սասմայ վրէն:

Սասմայ ծոեր,
Ջոջենց պետեր, —

Քեռի-Թորոս, Չինով-Օհան,
Ջոջ-Վերզոն ու Խոր-Գուսան,
Պարոն-Աստղիկ ու Խոր-Մանուկ,
Ճող-Վերապ ու Խոռ-Վիրապ.
Քաղքի մարդիկ,
Կտրիճ, ռամիկ,
Դուռ ու պատկից
Ու հարեւան,
Հազած-կապած
Ջրահ, ճօշան,
Թուր ու աղեղ,
Դռութ տւին, եկան մէկտեղ,
Չեռք զարկեցին՝ Մհեր քոնեն.
Մհեր քաշեց Թուր-Հաւրունին,
Կտրեց, թափեց՝ ինչոր ընկաւ
Թրի քերան.
Մնացածներ գումար փախան,
Յրիւ եկան
Խոբւ եղան.
Արունն ելաւ գոչ-գոչ գնաց...

Սեւ լուրն ընկաւ Սասմայ ականջ,
Ելան ժամի կոշնակ տւին
Ու չորս դիէն՝ ծեր-հալեւոր,
Մէր ու մանուկ, տղայ, աղջիկ,
Աղքատ, հարուստ, մշակ-քանւոր,
Քաղքի մարդիկ, գեղջուկ-ուամիկ
Ժամ՝ ժողովեցան.
Նորէն եկան
Ալիք ալիք
Ժովու նման՝
Ժով կապեցին ժամի քոլոր,
Տէրտէրի հետ աղօթք արին,
Ու քուխ սրտով աղաչեցին
Քրիստոսին ու սրբերին,
Անէծք կարդացին Մհերին . . .
— Անիծւիս դուն,
Զարըդ Մհեր,
Դու ներհակ Նեո,
Դոն կուազան,
Դոն արունքտէր,

Դոն որ կուգես
Աշխարհ քանդես, —
Ժարաւ մնաս
Ու անօթի,
Մահ ուզենաս,
Մահ չըգտնես,
Մինչի Քրիստոս
Գայ դատաստան՝
Քու դատ կըտրէ:
Ու անէծքը հասաւ ընեց
Մհերին.
Գետին էլ չէր կարող տանի
Մհերին:
Զի ու ոտքը ծունկերն ի վեր
Սէջ հողերուն կը մխըրճէր.
Մհեր ուժով, ուժով, զօրով
Հասաւ հօրումօր գերեզմանին,
Գրկեց հողվարքն ասաց լալով:
— Վեր եւ, հէրիկ,
Վեր եւ, մէրիկ

Մի ծար արէք
Ձեր Մհերին:
Ու հէրն ու մէր
Դերեզմանէն
Հացին, ասին.
— Գնա՛, որդի,
Տոսական քլուր,
Ազոաւու Այր.
Քար քաղէ,
Աւազ մաղէ,
Հաց ու զոջա՛,
Որ Բրիստոս
Քեզի խղճայ:

Երկիրն էլ չէր ուզեր տանի
Մհերին.
Արեգակն էլ աչքի նման
Մեռելին,
Պաղ կը նայէր ու լոյս չէր տայ
Մհերին:

Ձիու ոտքը ծունկերն է վեր
Մէջ հողերուն կը մխրճւէր.
Ուժով, զօրով կ'երթար Մհեր,
Ուժով, զօրով զնաց Մհեր,
Եկաւ հասաւ Վանայ ծովուն.
Տոսական-քլուր.
Ազոաւու Քար
Բացւեց մէկէն,
Առաւ իր ծոց
Մհերն ու Ձին.
Ազոաւու Քար
Գոցւեց նորէն
Երա վրէն:
Մէջ քարայրին անմահ, անմեռ,
Կայ ու կ'ապրի Սասմայ Մհեր.
Ո՛չ լաց կուլայ, ո՛չ կը զոջայ,
Որ Բրիստոս խղճայ, գլծայ,
Թողութիւն տայ:
Ամպեր կուգան՝
Հրով-ջրով՝

Մասքսայ սարէն,
Վանայ ծովէն
Ու Մհերի Դուռն ի վեր,
Ագռաւու Քարի վրէն
Կը կայծակտեն,
Կը գոռգռան,
Կ'անցնին կ'երթան:

Մհեր այրէն,
Քարի խորէն
Դողորդ կուտայ
Ու կը թնդայ
Բարկութիւնէն
Չին հրեղէն
Կը վրընջայ,
Դափը կուտայ,
Կը որոտայ: —
Ու կը ժաժեն
Մհերն ու Չին
Աշխարհն հիմէն:

V.

Ամէն տարի օրն Համբարձման
Ամէն փակ դուռ որ կը բացւի,
Գեղ ու քաղաք կը վախենան
Թէ կը բացւի Ագռաւու Քար
Ու լոյս-աշխարհ կ'ելնի Մհեր. —
Տէրտէր, ժամնոր ու ժողովուրդ
Աղօթք կ'անեն Քրիստոսին,
Չար Մհերին կալէ-կապէ,
Որ դուրս չըգայ՝ աշխարհ քանդէ:

Մէկ Համբարձման օր,
Երբ Մհերի Դուռ
Ծորէն բաց եղաւ. —
Ագռաւու Անձաւ
Մէկ ծերօն հովիւ
Ներս մտաւ, տեսաւ՝

Մէկ անոնիկ վէմ-մնարդ՝

Գլխին սաղաւարտ,

Հեծած Կրակ-Ձին՝

Կայծակը ձեռքին՝

Մթան մէջ կանգուն.

Հարցուց. — ի՞նչ ես դուն:

== Մհերն եմ ես, Դաւթի տղան.

Ո՞րկէ կուգաս:

— Լոյս-աշխարհէն ... հովին ասաց:

== Աշխարհ է՞ն է, ինչպէս որ էր.

Հարցուց Մհեր:

— Հա՛, ինչպէս էր, էլի է՞ն է.

Պատասխանեց հովիւը ծեր:

== Ծորէն Ռամիկ դառ կը դատի,

Աշխարհ կուտէ

Ու կը մնայ ինքն անօթի՞.

Հարցուց Մհեր:

— Հա՛, էդպէս է.

Համբաւ տուա հովիւը ծեր:

== Դէ՛հ, դարձ գնա՛ քու չար աշխարհ.

Ասաց Մհեր:

— Դուն ե՞րբ պիտի դուրս գաս աշխարհ.

Հարցում արաւ հովիւը ծեր.

== Երբ ոամիկ ուզենայ,

Դուրս կուգամ է՞ն պահ՝

Որ հարուստներու,

Բռնաւորներու

Եւ զրկողներու

Աշխարհ աւերեմ՝,

Հիմէ՞ն ու ամէն,

Ռամկութիւն քերեմ՝,

Ռամկի իրաւունք:

Պատգամ տուա Սասմայ Մհեր:

Ու դուրս ելաւ հովին Այրէն,

Ազոաւու Բար զոցեց նորէն:

Մինչեւ էսօր դեռ
Էնտեղ է Մհեր.
Հեծած հուրնի-Չին.
Սաղաւարտ գլխին,
Զրահ-շապիկ հագին,
Ոսկի գօտին մէջքին,
Վահան լանջքին,
Թուր-Կայծակին ձեռքին,
Կ'սպասէ հոգին ականջին,
Ու ականջը Ռամկի կանչին...



1500

ՀՀ Ազգային գրադարան



NL0284323

Արատապարթեան իրաւունքը վերապահուած է
ՀԵՂՐԱԿԻՆ:

Գիւնն է 3 ֆրանկ. Ամերիկայի համար՝ 40 սենթ:

Դիմել՝

Rédaction „Areg“, Wien, VII. Mechitaristengasse 4.